



Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը սպանված հայ զինվորների սաղավարտների մջև: © president.az

21.04.2021, 17:23

ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱԼԻԵՎԻ ԽԱՂԱԳՆԴԱԿ

Ադրբեջանցիների ձեռքում հայ ռազմագերիների ճակատագրի հյուժող անորոշությունը պատերազմից վեց ամիս անց:

Ամալյա վան Գենթ

Ապրիլի կեսերին Հայաստանի մայրաքաղաք Երևանում՝ ՄԱԿ-ի շենքի դիմաց, մասնակիցներն իրենց «լռության ակցիայով» ցանկանում էին ուշադրություն հրավիրել ադրբեջանցիների ձեռքում հայ ռազմագերիների (անգլ.՝ Prisoner of war, POW) վրա: «Ազատե՛ք 300 հայ ռազմագերիներին ու պատանդներին, հիմա՛», - կարելի էր կարդալ նրանց պատաստների վրա: «Հայրենիք դարձնե՛լ հայ ռազմագերիներին ու պատանդներին, անմիջապե՛ս», - նույնապես հայկական սփյուռքի պահանջն էր: Հազվադեպ համերաշխությամբ՝ ապրիլի կեսերին այն անցկացրեց «լռության ակցիաներ» 15 երկրներում, այդ թվում՝ Տորոնտոյում, Լոս Անջելեսում, Մոսկվայում, Փարիզում Բեռլինում և Ժնևում: Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի և Հայաստանի միջև պատերազմի ավարտն ապահոված հրադադարից կես տարի անց միշտ զգացվում է հայ զինվորների ու քաղաքացիական անձանց պակասը: Նրանց ընտանիքները չգիտեն, թե արդյոք իրենց սիրելիներն ընկել են պատերազմում կամ պահվում են Ադրբեջանի գաղտնի վայրերում՝ որպես պատանդ: Տեղեկությունները, որ կաթիլ-կաթիլ հասնում են նրանց Հայաստանի կամ Ադրբեջանի, Ռուսաստանի կամ ՄԱԿ-ի կիսապաշտոնական շրջանակներից, հակասական են և, հետևաբար, հյուժող:

Քաղաքականապես խոր ապակայունացնող հարց

Անհետ կորածների ճակատագրի անորոշությունը, կարծես, այսօր ցնցում է Հայաստանը ավելի շատ, քան հետպատերազմյան դարաշրջանի շատ այլ չլուծված խնդիրներ: Գուցե, որովհետև այդ հարցը բիրտ եղանակով բացահայտում է, թե ինչպես է Լեռնային Ղարաբաղի շուրջ վերջին պատերազմը հիմնովին փոխել ուժերի հարաբերակցությունը Հարավային

Կովկասում. ավելի շատ ժողովրդավարության և ավելի քիչ կոռուպցիայի խոստումը 2018 թ. Նիկոլ Փաշինյանին նետել էր Հայաստանի քաղաքական երկնակամար: Նրա ժողովրդավարացման շարժումը արտաքին աշխարհի և հարևան պետությունների կողմից դիտում էր մասամբ ակնածանքով, մասամբ՝ հիացմունքով: Հարձակողական պատերազմը, որը 2020 թ. աշնանը վարվում էր Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից (և հանդուրժվում էր Ռուսաստանի կողմից), Հայաստանը, սակայն, դարձրեց Հարավային Կովկասի ամենաթույլ, ամենաանկայուն օղակը, իսկ Նիկոլ Փաշինյանին՝ «անդամալույծ բաղ»:

Այդ փոփոխությունը ոչ մի տեղ այնքան հստակ չի արտացոլվում, որքան ռազմագերիների հարցում: Անցած նոյեմբերի՝ Ռուսաստանի միջնորդած հրադադարի մասին հայտարարության ութերորդ հոդվածը հստակորեն նախատեսում է «ռազմագերիների, պատանդների և ուրիշ բանտարկյալների, ինչպես նաև սպանվածների մասունքների անպայման փոխանակում»: Անցյալ նոյեմբերից ի վեր, սակայն, հայ իրավապաշտպան կազմակերպությունները և կառավարության ներկայացուցիչները պնդում են, որ Ադրբեջանը պահում է շուրջ 200 գերի: Այդ գերիների ազատ արձակումը Նիկոլ Փաշինյանը սկզբից նեթ հայտարարել էր որպես գերիստի: Չնայած այդ ժամանակից ի վեր նա բազմիցս մեկնել է Մոսկվա՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի և ադրբեջանական պետության պարագլուխ Իլհամ Ալիևի հետ բանակցությունների, բայց այդ կապակցությամբ նա ոչնչի չի հասել: Այժմ նշանակված հաջորդ՝ 2021 թ. հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններում, անհետ կորածների չլուծված հարցը կարող է ճակատագրական լինել Նիկոլ Փաշինյանի համար:

Խաղ կոշտ վիրակապերով:

Ադրբեջանը հայերի թիվը, որոնց նա դեռ պահվում է բանտարկված, մատնանշում է 52: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը լրատվամիջոցներին հայտարարել է, որ Ադրբեջանի անվտանգության ուժերը անցած դեկտեմբերին գերի են վերցրել 62 «դիվերսանտների»: Քանի որ նրանց ձերբակալությունները տեղի էին ունեցել հրադադարի համաձայնագրի ստորագրումից մեկ ամիս անց, նրանք չընկան պայմանագրի 8-րդ հոդվածի տակ: Ադրբեջանը Հայաստանին փոխանցել է 62 գերիներից դեռ տասին: Թե ինչու է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի կառավարությունը երկարաձգում մնացած 52 հայ գերիների հայրենադարձությունը, նախագահ Ալիևը չբացատրեց:

Այժմ կուլիսներում անգուսպ չարաշահումներ են կատարվում: ՀՀ Պաշտպանության և անվտանգության խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն ասաց, որ Հայաստանի մայրաքաղաք Երևանի քաղաքական գործիչները վախենում են, որ Ադրբեջանը հայ ռազմագերիներին կօգտագործի որպես ճնշման միջոց՝ «Հայաստանի հետագա ապակայունացման համար»: Ընդհակառակը, հայ դիտորդները համաձայն են, որ Բաքուն ցանկանում է գործի մեջ դնել «գերիի քարտը»՝ Հայաստանից է՛լ ավելի շատ զիջումներ կորզելու համար. քաղաքական մեկնաբան Հրաչյա Արզումանյանն ասում է, որ Բաքվի համար առանձնակի նշանակություն ունի Հայաստանի հարավով միջանցքը, որն Ադրբեջանը կապում է իր էքսկլավ Նախիջևանի և, այսպիսով, «եղբայր պետություն» Թուրքիայի հետ: Թեև հրադադարի 9-րդ հոդվածը խոստանում է այսպիսի միջանցքի ազատում, բայց այն նախատեսում է ռուս-հայկական վերահսկողության ներքո: «Բաքվի տեսանկյունից՝ առանց բացառապես թուրք-ադրբեջանական վերահսկողության ներքո միջանցքի՝ Լեռնային Ղարաբաղի վերջին պատերազմը միայն որոշ չափով ձեռնտու կլինի»:

Բաքվի նոր «Ռազմական ավարների» պուրակը

Որ նախագահ Իլհամ Ալիևը Լեռնային Ղարաբաղում իր գերակշիռ հաղթանակից ի վեր սիրում է պատերազմի իր հայ հակառակորդների հետ կատվի և մկնիկի հոգնեցնող խաղ խաղալ, ադրբեջանցի լրագրող Բահրուզ Սամադովը կասկածի չի ենթարկում: Սակայն նախագահի նախասիրությունը նա բացատրում է ոչ այնքան պարզ ռազմավարությամբ, որքան՝ «կառավարման ոճով»։ «Eurasianet» ինտերնետային պլատֆորմի համար գեկույցում նա գրում էր, որ Իլհամ Ալիևը իր իշխանության սկզբից ի վեր կառավարել է «ներքին և արտաքին թշնամիները պետք է ոչնչացվեն» համոզմունքի համաձայն: Պատերազմի ընթացքում ադրբեջանական ընդդիմության և քաղաքացիական հասարակության շատ ներկայացուցիչներ հույս էին տածում, որ «հաղթանակից հետո ավտորիտար համակարգի ողջ տրամաբանությունը կփոխվի: Սակայն արդյունքն այլ էր. Մինչդեռ արտաքին թշնամին արժանի է ֆիզիկական բնաջնջման, ըստ այս տրամաբանության՝ ներքին ընդդիմությանը, զոնե այն մասին, որը մերժում է իշխող կուսակցության լեգիտիմությունը, սպառնում է հետապնդում, երբ այն փորձում է տեսանելի դառնալ»:

Փաստորեն, Իլհամ Ալիևը համարվում է հետխորհրդային շրջանի ամենավտորիտար տիրակալներից մեկը: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների՝ այժմ նա թույլ տվեց, որ ամբողջ երկրով մեկ պտտվի նոր «մաքրման ալիքը» և ընդգրկի ընդդիմության ներկայացուցիչներին, ինչպես նաև՝ բանակի ղեկավարությանը: Նաջմադդին Մադիկովը նույնպես հաշվվում է այս մաքրման ալիքի գոհերի թվում: Գլխավոր շտաբի առաջվա պետը և պաշտպանության փոխնախարարը հաջողությամբ պատերազմ էր վարել Հայաստանի դեմ, մինչև որ նա անցած հոկտեմբերին հանկարծ առեղծվածային կերպով «անհետացավ»: Այդ ժամանակվանից նրան ոչ մի տեղ չեն տեսել:

Լրագրող Բահրուզ Սամադովն Ալիևի կառավարության տրամաբանությամբ է բացատրում նաև Բաքվում նոր «Ռազմական ավարների պուրակի» բացումը: Իր հասարակության համար նախագահ Ալիևը կեցվածք ընդունեց սպանված հայ զինվորների՝ սարսուռ առաջացնող սաղավարտների և հայ գերիների ծաղրանկարված տիկնիկների միջև, որոնց ոտքերն ու պարանոցը շղթայված են: Բահրուզ Սամադովը շարունակում է՝ նշելով, որ պատերազմի ընթացքում Ալիևը հայ զինվորներին ակնհայտ բնորոշում էր որպես «շներ», իսկ «մենք որսում ենք նրանց շների պես» արտահայտությունը «խանդավառությամբ ընդունվեց հասարակության մեջ և ընդդիմության շրջանակներում»: «Բայց հիմա նույն պիտակը կիրառվում է նրանց դեմ: Ապրիլի 12-ին պուրակի բացմանը Ալիևը հին կառավարությունների բարձրաստիճան պաշտոնյաներին բնորոշեց որպես «շներ»:

Հակառակորդից զիջումներ կորզելու համար ռազմագերիներին որպես պատանդներ պահելը միջազգային մարդասիրական իրավունքի և Ժնև կոնվենցիայի բացահայտ խախտում է: Նույն կերպ, ներքին և արտաքին թշնամիներին մարդկային կերպարանքից զրկելը ոտնահարում է միջազգային գործող իրավունքը: Այնուամենայնիվ, առաջվա պես Ադրբեջանը Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության»-ի անդամ է: